



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 հուլիսի 2003թ.

N193

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ՋՐԱՏԱՐ ՀՈՐԻՋՈՆՆԵՐԻ ՀԱՅՎԱԳՈՐԾՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում ստորերկրյա ջրերի հանքավայրերի և ջրատար հորիզոնների շահագործման, պետական հաշվառման, պահպանման և հատուկ ջրօգտագործման թույլտվություն տալու հարցերը կանոնակարգելու նպատակով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է:

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում ստորերկրյա ջրերի հանքավայրերի և ջրատար հորիզոնների շահագործման, պետական հաշվառման, պահպանման և հատուկ ջրօգտագործման թույլտվություն տալու կարգը (կցվում է):

2. Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը՝

ա) վերահսկում և պետական կառավարում է իրականացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում ստորերկրյա ջրերի հանքավայրերի և ջրատար հորիզոնների շահագործման, պետական հաշվառման, ռացիոնալ օգտագործման, դրանք սպառումից և աղտոտումից պահպանման բնագավառում:

բ) իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում ստորերկրյա ջրերի հանքավայրերի շահագործվող պաշարների պետական հաշվառումը, ինչպես նաև դրանց ռացիոնալ օգտագործման, շահագործման ռեժիմի և որակի վերահսկումը:

գ) ստորերկրյա ջրերի պետական հաշվառման նյութերի հիման վրա, սահմանված կարգով ապահովում է կառույցների և այլ օբյեկտների նախագծման, շինարարության և շահագործման համար անհրաժեշտ հիդրոերկրաբանական կանխագուշակումների մասին ստորերկրյա ջրերի դիտանցի (մոնիտորինգ) համառոտ տվյալների տրամադրումը ջրօգտագործողներին:

դ) պարբերաբար ապահովում է ջրերի աղտոտման աստիճանի և տեխնածին գործընթացների ազդեցության տակ դրանց հնարավոր փոփոխման վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը ջրօգտագործողներին:

ԼՂՀ վարչապետ

Ա. ՂԱՆԻԵԼՅԱՆ

Կ Ա Ր Գ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում ստորերկրյա ջրերի հանքավայրերի և ջրատար հորիզոնների շահագործման, պետական հաշվառման, պահպանման և հատուկ ջրօգտագործման թույլտվություն տալու

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում ստորերկրյա ջրերի հանքավայրերի շահագործման տրամադրման, պահպանման, ինչպես նաև պետական հաշվառման և ռացիոնալ օգտագործման նկատմամբ վերահսկողության կարգը:

2. Ստորերկրյա ջրերի օգտագործումը վճարովի է և իրականացվում է սույն կարգին համապատասխան:

II. Ստորերկրյա ջրերի օգտագործումը

3. Ստորերկրյա ջրերի հաստատված պաշարներով հանքավայրերը թույլատրվում են շահագործման Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հատկապես լիազորված պետական մարմնի կողմից տրված արտոնագիր ունեցող ջրօգտագործողի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության միջև «Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքից օգտվելու կարգի մասին» ԼՂՀ կառավարության հաստատած կարգով կնքված պայմանագրերի հիման վրա:

4. Ջրամատակարարումը թույլատրվում է սահմանված կարգով չհաստատված, ինչպես նաև հաստատված (եթե դա չի ազդում ստորերկրյա ջրերի հանքավայրի շահագործման ռեժիմի վրա) պաշարներով ստորերկրյա ջրերի հանքավայրերում միայն հատուկ ջրօգտագործման թույլտվության հիման վրա, ջրօգտագործման պայմանների համաձայնեցման դեպքում՝

ա) պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մարմինների հետ բոլոր դեպքերում.

բ) պետական անասնաբուժական ծառայության մարմինների հետ՝ ստորերկրյա ջրերն անասնաբուժության, ձկնաբուժության ու կենդանական ծագում ունեցող սննդամթերք և հումք մթերող ու վերամշակող կազմակերպությունների կարիքների համար օգտագործելու դեպքերում.

գ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության հետ՝ ստորերկրյա ջրերը բուժիչ և առողջարարական նպատակներով օգտագործելու դեպքերում.

դ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդյունաբերության մեջ աշխատանքների անվտանգ կատարման և Լեռնային հսկողության տեսչության հետ՝ ստորերկրյա ջրերը լեռնաարդյունաբերական կազմակերպությունների կողմից օգտագործվելու դեպքում (լեռնահատկացման սահմաններում).

ե) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների զարգացման և քաղաքաշինության նախարարության հետ՝ բնակավայրերում ջրհաններ կառուցելու դեպքում:

զ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հետ՝ ստորերկրյա ջրերը գյուղատնտեսական արտադրության ոլորտում օգտագործելու դեպքում:

5. Հատուկ պաշտպանական նշանակություն ունեցող օբյեկտների, զինվորական միավորումների ջրօգտագործման պայմանների և թույլտվության ձևակերպումն իրականացվում է համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների համաձայնությամբ:

6. Առաջնային ջրօգտագործողները, որոնց անջատ ջրօգտագործման թույլտվություն է տրված, իրավունք ունեն թույլատրելու երկրորդային ջրօգտագործում՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության հետ:

7. Ստորերկրյա քաղցրահամ ջրերն օգտագործման են տրամադրվում բնակչության խմելու և կենցաղային կարիքները բավարարելու նպատակով: Այն տարածաշրջաններում, որտեղ առկա են բավարար քանակությամբ ստորերկրյա ջրերի պաշարներ, իսկ մակերևութային ջրեր չկան, ժամանակավորապես թույլատրվում է ստորերկրյա ջրերի օգտագործումը՝ տեխնիկական և այլ նպատակներով:

III. Ջրհանի կառուցումը և շահագործումը

8. Ստորերկրյա ջրերի ջրհանները (հորատանցքերը) կառուցում և շահագործում են սահմանված կարգով լիցենզիա ստացած կազմակերպությունները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության համաձայնությամբ:

9. Ստորերկրյա ջրերի շահագործական հորատանցքերը հորատվում են սույն կարգի 4-րդ կետում նշված ջրօգտագործման պայմանների կատարումից հետո՝ ջրհանի նախագծի առկայության դեպքում: Շահագործական հորատանցքերի վերականգնման և նորոգման աշխատանքների նախագծերը համաձայնեցվում, իսկ կատարման ընթացքը վերահսկվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կողմից:

10. Կենտրոնացված ջրամատակարարման համար ջրհան կառույցները տեղադրվում են հաստատված պաշարներով հանքավայրերի՝ այդ նպատակով հատուկ առանձնացված տեղամասերում: Ոչ կենտրոնացված ջրամատակարարման համար ջրհան կառույցները (հորատանցքերը, կապտաժները) տեղադրվում են հատուկ ջրօգտագործման թույլտվությամբ:

IV. Ստորերկրյա ջրերի պետական հաշվառումը

11. Ստորերկրյա ջրերի հանքավայրերի պաշարների պետական հաշվառումը պետք է ապահովի ընթացիկ և հեռանկարային ծրագրավորման, ջրապահպանման միջոցառումների անցկացման, ստորերկրյա ջրերի օգտագործման համալիր գծապատկերի կազմման, ինչպես նաև ստորերկրյա ջրերի ռացիոնալ օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման համար անհրաժեշտ ելակետային տվյալների ստացումը:

12. Հանքավայրից արտանդվող ջրի քանակը սահմանված կարգով հաշվառում է ընդերքօգտագործողը: Հաշվառման նյութերը, բացի տարեկան 2-տա ձևից և վիճակագրական հաշվետվությունից, ներկայացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն:

**V. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում
ստորերկրյա ջրերի հանքավայրերի ռացիոնալ
օգտագործման նկատմամբ վերահսկողությունը**

13. Ստորերկրյա ջրերի որակի, վիճակի, աղտոտման և սպառման մասին պարբերաբար տեղեկատվություն ստանալու, այդ գործընթացների կանխագուշակումների և բոլոր ջրօգտագործողների կողմից ստորերկրյա ջրերի պահպանման կարգն ապահովելու, կանխարգելող միջոցառումներ մշակելու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը իրականացնում է վերահսկողություն՝

ա) խոշոր արդյունաբերական և գյուղատնտեսական օբյեկտների շրջաններում, կոյուղի և մաքրման կայաններ չունեցող տեղամասերում տեղադրված ջրհան կառույցներում ստորերկրյա ջրերի որակի և վիճակի նկատմամբ.

բ) բոլոր ջրօգտագործողների կողմից ջրհաններում կատարվող անհրաժեշտ դիտարկումների և չափումների, ինչպես նաև օգտակար հանածոների պաշարների պետական կառույցների հանձնարարականների կատարման նկատմամբ.

գ) ստորերկրյա ջրերի ջրհանների շինարարությամբ զբաղվող կազմակերպությունների կողմից կատարվող հորատման և փորձնական հիդրոերկրաբանական աշխատանքների որակի, ինչպես նաև ջրի առանձին հորատանցքերի հորատման և նորոգման վիճակի նկատմամբ.

դ) ստորերկրյա ջրերի հետախուզված և շահագործվող հանքավայրերի տվյալների համապատասխանության նկատմամբ:

14. Վերահսկողության և պահպանման հիմնական օբյեկտներ են շահագործվող ջրատար հորիզոնների խմելու, տնտեսական ու հանքային ջրերի ջրամատակարարման ջրհանները: